ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՎ. ՓԱՐԻԶ, 1975 Թ. ՀՈՒՆԻՍԻ 13

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐՎԱՆԴ ՏԵՄԻՐՃՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Յոյժ մխիթարական է Մեզ հաստատել թէ հայ սփիւռքի տարածքի վրայ մեր ժողովուրդը վառ կը պահէ իր նախնեաց հաւատքը և հայ դպրութեան ջահը, նոր սերունդներու հոգիներուն բաշխելով լոյսը սուրբ Աւետարանին և հայ մշակոյթին:

Այդ փրկարար առաքելութեան կենսագործումը մեծ չափով կը պարտինք նաև այն գիտակից ու ազնիւ հայորդիներուն, որոնք անսակարկ կերպով իրենց բարոյական ու նիւթական միջոցներով շէն կը պահեն մեր նշոյթի տուները և կրթական հաստատութիւնները:

Այդ ընտրեալներու հոյլին կը պատկանիք նաև Դուք, յարգելի Տիար, Ձեր երկար տարիներու շինարար ու հոգատար գործունէութեամբ:

Ձեր անուան բարձրացող հայ վարժարանը ի Պէյրութ և Ձեր բազում նուիրաբերումները և հանրօգուտ գործունէութիւնը պատիւ կը բերեն Ձեզի և Ձեր գերդաստանին:

Յիշատակութեան արժանի է նաև Ձեր հոգատարութիւնը ի պայծառութիւն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի:

Իբրև բոլորի կողմէ ճանչցուած ու գնահատուած ազգային բարերարի, Մենք սոյն կոնդակով Ձեզի կը բերենք Մեր հայրապետական օրհնութիւնը և կը պարգևատրենք Ձեզ ս. Գրիգոր Լուսաւորչի շքանշանով, աղօթքով սրտաբուխ որ Տէրը Ձեզի պարգևէ կենաց երկա՜ր տարիներ ևս, ի կատարումն Ձեր բոլոր ազգանուէր իղձերու:

Թող Աստուած մնայ Ձեզի միշտ օգնական և պահէ-պահպանէ Ձեր կեանքը ընտանեկան երջանիկ Ձեր յարկին տակ, շրջապատուած գուրգուրանքովը Ձեր հարազատներուն և սիրելիներուն և երախտագիտական զգացումներովը մեր ժողովուրդի:

Շնորհք և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, այժմ և յաւիտեան. ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն հոկտեմբերի
1975 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԴ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 814